

Հիմա ահա

Ձայն մը լսեցի եւ ոտքի ելայ
եւ ահա հիմա

այս ճամբուն վրայ
կը քալեմ կ'երթամ շիբ-շիտակ
առաջ
առանց նայելու իսկ

ոչ ձախ

ոչ աջ

Դիմացս ոչինչ
ո՞ւր կ'երթամ արդեօք
այսպէս անխռով

հանդարտ ու անհոգ

դէմս լռութիւն
շփոթ մը աղուոր

Ո՞ւր կ'երթամ արդեօք...

բայց ի՞նչ կարելոր

Ձայն մը լսեցի եւ արդէն հիմա
այս ճամբուն վրայ
կամայ–ակամայ
պէտք է ընդունիմ որ կորսուած եմ

Բայց դեռ յոյս ունիմ
եւ զիս կը փնտռեմ

Ի՞նչ էր պատգամը
կամ պատգամ մը կա՞ր
մէկն ալ չկար որ իմ հետս գար

զլուխս առի ու ճամբայ ելայ

Նոյն պատմութիւնն է
միշտ բան մը կ'ըլլայ...

Ձայն մը լսեցի եւ ոտքի ելայ
եւ հիմա ահա
ես ինձի վկայ՝
ճամբաս կը փնտռեմ այս ճամբուն
վրայ

Ամէն մէկ վայրկեան նախորդէն
երկար
կարծեցի վերջն էր
կ'երեւի դեռ կար
ուրեմն նորէն ելայ եւ ոտքի
ոչ մէկ բան ըսի նորէն ոչ ոքի
ու ճամբաս գացի
այս է բախտս իմ
մինչեւ որ գտնեմ, գիտնամ կամ
հասնիմ

Կանչը լսեցի եւ ոտքի ելայ

եւ հիմա

ահա